ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 թ. ՄԱՅԻՍԻ 21-ի ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Քիմիայի ֆակուլտետի, ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման հարցը

Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի արտահերթ նիստում՝ քննարկելու ենք ընդհամենը մեկ հարց՝ Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնի համալրման մրցույթի անցկացման հարցը: Այսօր գիտական խորհրդի 16 անդամներից ներկա են 15 անդամը՝ բացակայում է Լիանա Գաբրիելյանը՝ ով գտնվում է գործուղման մեջ: ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար դիմել են նույն ամբիոնից պրոֆեսոր Կարինե Գրիգորյանը և դոցենտ Գևորգ Գրիգորյանը: Երկու թեկնածուների գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող պահանջներին: Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ամբողջական են, անցել են բոլոր փուլերը և բավարարում են ներկայացվող պահանջներին:

Թեկնածուներ Կարինե Գրիգորյանը և Գևորգ Գրիգորյանը ներկայացրեցին իրենց աշխատանքային ծրագրերը: Մրցույթի մասնակիցների մասին կարծիք հայտնեցին պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանը, դոցենտներ Ա.Ի.Մարտիրյանը, Ռ.Պ Մխիթարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ մրցույթի մասնակիցները ունեն մեծ գիտամանկավարժական փորձ և արժանի են զբաղեցնելու թափուր պաշտոնը: Նիստի նախագահը առաջարկեց Գևորգ Սերգեյի Գրիգորյանին և Կարինե Ռաֆայելի Գրիգորյանին երաշխավորել հայտարարված մրցույթին մասնակցելուն:

Բաց քվեարկությամբ խորհուրդը 14 կողմ ձայնով (մեկ անդամ՝ քվեարկությանը չմասնակցած) որոշեց մրցույթի մասնակցների թեկնածությունները երաշխավորել Քիմիայի ֆակուլտետի, ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի թափուր պաշտոնում ընտրվելու համար, նրանց անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Որոշեցին – Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ – Հ.Գ. Խաչատրյան

Անդամներ-Ի.Լ.Ալեքսանյան և Հ.Հովհաննիսյան

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ.Գ.Խաչատրյանը, գիտական խորհրդին է ներկայացնում քվեարկության արդյունքները՝ (16-անդամներից ներկա էին 15-ը) ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 15 անդամներ: Քիմիայի ֆակուլտետի, ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար՝

Գևորգ Սերգեյի Գրիգորյան կողմ քվեարկել են խորհրդի- 12 անդամ, դեմ-3, անվավեր քվեաթերթ- չկա:

Կարինե Ռաֆայելի Գրիգորյան կողմ քվեարկել են խորհրդի- 3 անդամ, դեմ-12, անվավեր քվեաթերթ- չկա:

Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել (խորհրդին մասնակցող 15 անդամներից քվեարկել են 14-ը) քվեարկության արդյունքները և Քիմիայի ֆակուլտետի, ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում, հավակնորդ քիմ. գիտ.թեկնածու, դոցենտ Գևորգ Սերգեյի Գրիգորյանի, ընտրվելու հարցը:

Նիստի նախագահ,

քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան

Նիստի քարտուղար

քիմ.գիտ.թեկնածու, դոցենտ Մ.Ա.Սամվելյան